ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» փետրվարի 2013թ. N----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.580-Ն որոշման հավելվածով հաստատված ծրագրի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Արարատյան 1-ին զանգվածի թաղամաս հ.4/1 շենքի հ.28 բնակարանի Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 1/9 բաժնեմասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 16.05.2012թ. հ.16052012-01-0901 վկայականը) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արմենակ Գևորգյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արմենակ Գևորգյանի լիազորված անձ Նարինե Ներսիսյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Արարատյան 1-ին զանգվածի թաղամաս հ.4/1 շենքի հ.28 բնակարանի նախկին բնակիչ՝ հանգուցյալ Սիրանուշ Պետրոսյանին պատկանող 1/9 բաժնեմասը, որը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 16.05.2012թ. հ.16052012-01-0901 վկայականը) Ա.Գևորգյանին մասնավորեցնելու խնդրանքով։

Սիրանուշ Պետրոսյանը՝ մահացած 10.06.2000թ., Արմենակ Վանոյի Գևորգյանի խորթ մայրն է, 05.10.1966թ. ամուսնացել է Վանո Գևորգյանի հետ (հիմք՝ ամուսնության վկայականը)։ Հոր մահից հետո Արմենակ Գևորգյանն է պահել և խնամել Սիրանուշ Պետրոսյանին։

Համաձայն Հայաստանի ազգային արխիվի 04.05.2011թ. հ.853 արխիվային տեղեկանքի՝ ՀՀ պատգամավորների Երևանի Շահումյանի շրջխորհրդի գործկոմի 14.07.1994թ. հ.20/489 որոշմամբ Արարատյան 1-ին զանգվածի հ.4/1 շենքի հ.28՝ երկու սենյականոց բնակարանը սեփականաշնորհվել է Սիրանուշ Պետրոսյանի, Արմենակ Գևորգյանի, Անահիտ Կարապետյանի, Գրիգոր Գևորգյանի, Արսեն Գևորգյանի, Էդուարդ Գևորգյանի, Նարինե Գևորգյանի, Արման Գևորգյանի և Անահիտ Գևորգյանի անվամբ։

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184 հոդվածի համաձայն, ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց, իսկ 1185 հոդվածի համաձայն ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի։ Ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի, եթե չկա կտակ, կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանած այլ դեպքերում։

Տվյալ դեպքում՝ Սիրանուշ Պետրոսյանը չունի ոչ ըստ կտակի և ոչ էլ ըստ օրենքի ժառանգներ։

Քանի որ բացակայում է Արմենակ Գևորգյանի, Անահիտ Կարապետյանի, Գրիգոր Գևորգյանի, Արսեն Գևորգյանի, Էդուարդ Գևորգյանի, Նարինե Գևորգյանի, Արման Գևորգյանի և Անահիտ Գևորգյանի և ժառանգատուի ազգակցական կապը հաստատող որևէ ապացույց, հետևաբար Արարատյան 1-ին զանգվածի հ.4/1 շենքի հ.28 բնակարանի

Սիրանուշ Պետրոսյանին պատկանող բաժնեմասը հանդիսացել է անժառանգ գույք, որի նկատմամբ Երևան համայնքը ձեռք է բերել սեփականության իրավունք (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 16.05.2012թ. հ.16052012-01-0901 վկայականը)։

Համաձայն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի 19.07.2012թ. հ.26/15-4602 գրության, Արարատյան 1-ին զանգվածի թաղամաս հ.4/1 շենքի հ.28 բնակարանն օգտագործվում է նույն բնակարանի բնակիչ Արմենակ Գևորգյանի ընտանիքի կողմից և չի առարկել նախկին բնակիչ՝ հանգուցյալ Սիրանուշ Պետրոսյանին պատկանող 1/9-րդ բաժնեմասը, որը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը, անհատույց օտարելու Ա.Գևորգյանին։

Ներկայացվել է Արարատյան 1-ին զանգվածի թաղամաս հ.4/1 շենքի հ.28 բնակարանի մյուս սեփականատերերի հայտարարությունը՝ հօգուտ Ա.Գևորգյանի, բնակարանի 1/9-րդ բաժնեմասից հրաժարվելու վերաբերյալ։

Հաշվի առնելով վերոգրյալը «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ